

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՍՏՐԱՆ

ԿԱՐԻՆԵ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԱՇՈՒՂՅԱՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ
13-14-ՐԴ ԴԱՐԵՐԻ
ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Թ.00.02 - «Փիլիսոփայության պատմություն» մասնագիտությամբ
փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ -2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝	փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յա. Ի. Խաչիկյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Ա. Ջաքարյան փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս. Ս. Պետրոսյան
Առաջատար կազմակերպություն՝	Երևանի պետական տնտեսագիտական համալսարան

2016 թ. մարտի 23-ին, ժ.15.00-ին, Երևանի պետական համալսարանում
գործող ԲՈՀ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական
խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025 ք. Երևան, Աբովյան փ., 52ա,
Երևանի պետական համալսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանի գիտական
աշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. փետրվարի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝	փ.գ.թ., դոցենտ Գ. Ա. Սողոմոնյան
--	------------------------------------

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Միջնադարյան հայ մշակույթի և գիտության մեջ 13-14-րդ դդ. քերականական մեկնությունները բացառիկ արժեք ունեն, և դրանց անդրադառնալը միշտ արդյունավետ է հայագիտության գրեթե բոլոր ոլորտների պատմության հետազոտության իմաստով: Քերականական մեկնությունները փիլիսոփայական և գեղագիտական դիտակետից հետազոտելը առանձնապես կարևորվում է նկատի առնելով, որ քերականագիտական ձեռնարկներ լինելով հանդերձ՝ դրանք նաև յուրատեսակ հանրագիտարաններ են, փիլիսոփայական և գեղագիտական մտքի հուշարձաններ, որոնք նոր լույս են սփռում հայոց ազգային հոգեմտավոր արժեքների վրա:

Թրակացու «Քերականական արվեստ» երկը, լինելով հունաբան դպրոցի առաջին թարգմանությունը, ծնունդ է տվել հայոց մեկնողական քերականությունների բազմադարյան ավանդույթին: Թարգմանության ընտրությունը և մեկնությունների հետագա ծավալումը բացատրվում է քերականության հին հունական լայն ըմբռնմամբ. այն համարվում էր գիտելիքի նախադուռ և ընդգրկում էր ոչ միայն լեզվաբանական, այլև արվեստաբանական, տրամաբանական, գեղագիտական, բարոյագիտական և փիլիսոփայական հարցադրումներ:

Պատահական չէ, որ հունական քերականությունը ծագել է փիլիսոփայության ծիրում, և հունական լեզվաբանության այդ շրջանն ուղղակի կոչվում է «փիլիսոփայական», իսկ քերականական եզրույթների գերակշիռ մասը շրջանառության մեջ են դրել ոչ թե քերականները, այլ փիլիսոփաներն ու տրամաբանները: Հայ քերականական և փիլիսոփայական երկերի թարգմանության ընթացքում անհրաժեշտաբար ստեղծվեցին եզրույթների հայերեն համարժեքները, որոնց գերակշիռ մասը կենսունակ է ցայսօր: Թրակացու «Քերականության» նկատմամբ հայ մեկնիչների ստեղծագործական, ազատ մոտեցումը սկզբնավորվել է թարգմանչի կողմից, որ հայացրել է մի շարք

դրույթներ՝ հարմարեցնելով հայերենի օրինաչափություններին, իսկ հետագա մեկնիչները հաճախ զարգացրել են Ղիոնիսիոսից տարբեր, անգամ հակադիր տեսակետներ արվեստի էության և բնույթի հարցերում, քանի որ ելնում էին հայ ազգային միջավայրի գեղարվեստական փորձից:

Ատենախոսության օբյեկտը և առարկան: Ատենախոսության օբյեկտը 13-14-րդ դդ. հայ քերականական մեկնություններն են, ի մասնավորի՝ Եսայի Նչեցու «Վերլուծութիւն քերականութեան»¹, Վարդան Արևելցու «Մեկնութիւն քերականի»², Հովհաննես Քռնեցու «Յագաղս քերականին»³, Հովհաննես Երզնկացու «Հաւաքումն մեկնութեան քերականի»⁴ և Հովհաննես Ծործորեցու «Համառատ տեսութիւն մեկնութեան քերականի»⁵ երկերը:

Ատենախոսության առարկան 13-14-րդ դդ. հայ քերականական մեկնություններում ամփոփված փիլիսոփայական և գեղագիտական հայացքներն են, ինչպես նաև աշխարհայացքային մի շարք գաղափարներ, պատկերացումներ ու խնդիրներ:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է վերլուծել 13-14-րդ դդ. հայ քերականական մեկնությունները՝ փիլիսոփայական-գեղագիտական կտրվածքով, գնահատել մեկնիչների հայացքները և ցույց տալ, որ տվյալ պատմաշրջանում ստեղծված քերականական մեկնությունները միաժամանակ նաև փիլիսոփայական և գեղագիտական մտքի կարևոր հուշարձաններ են: Քերականների աշխարհայացքի, փիլիսոփայական և գեղագիտական ըմբռումների վերլուծության նպատակը հայ փիլիսոփայության պատմության համապատկերն ամբողջացնելն է, այդպիսով նաև ազգային փիլիսոփայական մտածողության զարգացմանը նպաստ բերելը:

¹ Տե՛ս **Եսայի Նչեցի**, Վերլուծութիւն քերականութեան, Երևան, 1966:

² Տե՛ս **Վարդան Արևելցի**, Մեկնութիւն քերականի, Երևան, 1977:

³ Տե՛ս **Հովհաննես Քռնեցի**, Յագաղս քերականի, Երևան, 1977:

⁴ Տե՛ս **Հովհաննես Երզնկացի**, Հաւաքումն մեկնութեան քերականի, Լոս Անձելըս, 1983:

⁵ Տե՛ս **Հովհաննես Ծործորեցի**, Համառատ տեսութիւն մեկնութեան քերականի, Լոս Անձելըս, 1984:

Նախանշված նպատակին հասնելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

Ա) ներկայացնել ժամանակաշրջանի պատմամշակութային համապատկերը, քանի որ քերականական մեկնությունները ստեղծվել են մի կողմից՝ մշակութային ակնհայտ վերելքի, մյուս կողմից՝ քաղաքական-դավանաբանական բարդ իրավիճակում, և այդ բոլորն այս կամ այն կերպ անդրադարձել է մեկնությունների բովանդակության վրա:

Բ) վերլուծել ժամանակի փիլիսոփայական մտքի և միարարական ու հակամիարարական պայքարի կապն ու փոխազդեցությունները՝ հատկապես նկատի առնելով, որ ուսումնասիրվող հեղինակներից Վարդան Արևելցին, Հովհաննես Երզնկացին և Եսայի Նչեցին հակամիարար են եղել, իսկ Հովհաննես Ծործորեցին և Հովհաննես Քննեցին՝ միարարության գաղափարակիրներ:

Գ) համառոտ ներկայացնել մեկնիչների կյանքն ու գիտամանկավարժական գործունեությունը:

Դ) հետազոտել մեկնիչների պատկերացումները գիտությունների դասակարգման վերաբերյալ:

Ե) վերլուծել մեկնիչների հայացքները Աստծո և մարդու, հոգու և մարմնի, ճանաչողության մեջ զգայությունների և բանականության դերի, տիեզերքի և տարրերի մասին:

Զ) պարզաբանել մեկնիչների դիրքորոշումը նոմինալիզմի և բանապաշտականի («ռեալիզմի») բանավեճում, վերլուծել առանձինի և ընդհանուրի նրանց ըմբռնումները:

Է) պարզաբանել մեկնիչների բարոյագիտական հայացքները և թվերի խորհրդապաշտության ըմբռնումները:

Ը) ներկայացնել մեկնություններում ամփոփված գեղագիտական, արվեստի տեսության, գրական ժանրերի և ստեղծագործությունների գնահատման չափանիշների, արվեստի երկարակեցության և այլ ըմբռնումները:

Թ) մանրամասն վերլուծել Հովհաննես Երզնկացու երաժշտական գեղագիտությունը՝ հաշվի առնելով հայ երաժշտագիտական մտքի պատմության մեջ դրա ունեցած կարևորությունը:

Ժ) ընդհանուր գծերով արժևորել քերականական մեկնությունների տեղը և խաղացած դերը հայ փիլիսոփայական և գեղագիտական մտքի պատմության մեջ:

Ատենախոսության հիմնահարցի գիտական մշակվածության աստիճանը:

Հայ քերականագիտական մտքի պատմությունը գիտական հիմքի վրա է դրել Ն. Ադոնցը՝ վերականգնելով մատենագրական հարուստ ժառանգությունը: Ադոնցը, սակայն, հակված է որոշակիորեն թերագնահատելու մեկնությունների ինքնուրույնությունը: Նույն դիրքերից է ելնում նաև Մ. Աբեղյանը: Քերականագիտական մտքի պատմության ուսումնասիրության ուղղությամբ վճռական քայլ է արել Գ. Ջահուկյանը. վերլուծելով հայ հեղինակների քերականագիտական միտքը, նա տվել է նաև մեկնիչ-քերականների աշխարհայացքային-փիլիսոփայական սեղմ գնահատականները: Քննարկվող խնդրի տեսանկյունից մեծ է Ա. Ադամյանի դերը, որն ըստ արժանվույն գնահատելով Ն. Ադոնցի և նրա հետևորդների կատարած հսկայածավալ աշխատանքը, ընդգծում է այդ աշխատանքի բանասիրական ուղղվածությունը: Ա. Ադամյանը նորովի գնահատեց մեկնիչներին և առաջադրեց մեկնություններում առկա գեղագիտական մտքի ուսումնասիրման պահանջը: Մեկնություններն արժևորելու խնդրի բանալի է Ս. Արևշատյանի «Փիլիսոփայական գիտության ծնավորումը հին Հայաստանում (5-6 դդ.)» աշխատությունը, որտեղ վերլուծված են Թրակացու առաջին հայ մեկնիչի՝ Ղավիթ Քերականի, փիլիսոփայական-գեղագիտական հայացքները, ինչը մեծապես նպաստում է հետագա մեկնիչներին գնահատելու խնդրի լուծմանը, քանի որ վերջիններիս մեկնությունները հիմնականում հենվում են Քերականի մեկնության վրա⁶:

⁶ St'u **Аревшатын С.С.**, Формирование философской науки в древней Армении (V-VI вв.) Ереван, 1973.

Ատենախոսության մեթոդաբանական հիմունքները: Հետազոտությունը կատարվել է փիլիսոփայապատմական գիտության ավանդական ծագումնաբանական և գործառնական մեթոդների համադրական եղանակով՝ հաշվի առնելով հետազոտվող նյութի՝ փիլիսոփայական և մերձփիլիսոփայական (բուն քերականագիտական և լեզվաբանական հատվածը) բնույթը: Ատենախոսության մեջ կիրառվել են հայ փիլիսոփայապատմական գիտության ավանդական մեթոդները՝ պատմահամեմատական, ծագումնաբանական, գործառնական:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ 13-14-րդ դդ. հայ քերականական մեկնություններն առաջին անգամ համակարգված և համակողմանիորեն ներկայացվում են որպես փիլիսոփայական և գեղագիտական մտքի կարևոր սկզբնաղբյուրներ: Մեկնություններում ներամփոփված փիլիսոփայական և գեղագիտական միտքն առաջին անգամ է, այսպիսով, դարձել փիլիսոփայապատմական հետազոտության առարկա՝ մինչ այդ լինելով ընդամենը ակնարկված և ենթադրված:

Առաջին անգամ է, որ Վարդան Արևելցին, Եսայի Նչեցին, Հովհաննես Ծործորեցին և Հովհաննես Քոնեցին ներկայացվում ու գնահատվում են որպես փիլիսոփա և գեղագետ՝ համաձայն քերականության մեկնություններում շարադրված իրենց հայացքների: Ինչ վերաբերում է Հովհաննես Երզնկացուն, ապա նրա մասին թեև գրվել են փիլիսոփայապատմական ուսումնասիրություններ, բայց դրանցում չեն ներառվել նրա քերականական երկում առկա փիլիսոփայական և գեղագիտական ըմբռումները: Գիտական նորույթ է նաև այն, որ առաջին անգամ է երևան հանվում դավանաբանության հարցերում հակամարտ՝ միարար և հակամիարար մեկնիչների փիլիսոփայական և գեղագիտական ըմբռումների ընդհանրությունը նոմինալիզմի և «ռեալիզմի» բանավեճում:

Ատենախոսության գիտական նորույթը քերականական մեկնությունների փիլիսոփայական արժեքի վերլուծումն ու արժևորումն է, քերականագիտական նշանակությունից գատ՝ քերականական մեկնությունների աշխարհայացքային,

ինացաբանական, գոյաբանական, տրամաբանական, ինչպես նաև բարոյագիտական և գեղագիտական հարուստ շերտերը իրապես ազգային փիլիսոփայական մտքի անկապտելի մաս ներկայացնելը:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսությունն իր վերլուծություններով և եզրակացություններով կարող է ունենալ տեսական կարևոր նշանակություն. մասնավորապես այն կարող է քերականական մեկնություններին նախորդող և հաջորդող փուլերը փիլիսոփայապատմական դիտանկյունից հետազոտելու մեթոդաբանական հիմք և ուղեցույց լինել, ինչպես նաև ազդակ ծառայել քերականական մեկնությունների նորովի ուսումնասիրությունն ու արժևորումը գիտական նոր հիմքերի վրա դնելու համար: Ավելին, այն կարող է մեծապես նպաստել ոչ միայն փիլիսոփայության, այլև փիլիսոփայական լեզվաբանության, տրամաբանական լեզվաբանության և գեղագիտական տարբեր տեսությունների պատմության ուսումնասիրությանը:

Ատենախոսությունը կարող է օգտագործվել փիլիսոփայության, սոցիոլոգիայի, հոգեբանության և բանասիրության մասնագիտությունների գծով դասավանդվող «Հայ փիլիսոփայության պատմություն», «Հայ մշակույթի պատմություն և տեսություն», «Հայ գեղագիտական մտքի պատմություն», «Հայոց լեզվի պատմություն և տեսություն» դասընթացներում:

Ատենախոսության արդյունքների փորձաքննությունը: Ատենախոսությունը գլուխ առ գլուխ ներկայացվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայ փիլիսոփայության բաժնի տեսական սեմինար-քննարկումներին (1992-97թթ.), այն ամբողջությամբ քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել նույն բաժնի կողմից (2015թ., նոյեմբեր):

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է Ներածությունից, երեք գլուխներից (առաջին գլուխը կազմված է երեք, երկրորդը՝ հինգ, երրորդը՝ չորս ենթագլուխներից), Եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 174 էջ է:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածությունում հիմնավորվում են թեմայի ընտրության արդիականությունը, նպատակը և խնդիրները, ինչպես նաև ներկայացվում ատենախոսության գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքերը և թեմայի գիտական մշակվածության աստիճանն ու նշանակությունը:

Առաջին գլխի՝ **«Քերականության մեկնությունների վերելքը 13-14-րդ դարերում, միարարական շարժումը և քերականները»**, առաջին ենթագլխում՝ **«Պատմամշակութային համապատկերը»**, ներկայացվել է 13-14-րդ դդ. արտաքին անկայուն քաղաքական իրադրության պայմաններում տնտեսական կյանքի, տարանցիկ առևտրի և քաղաքաշինության ոլորտներում տեղի ունեցած որոշակի զարգացման հիման վրա մշակութային ոլորտում տեղի ունեցած առաջընթացը: Հենց այդ մշակութային վերելքն է արտացոլվել ժամանակին մեծ պահանջարկ վայելող քերականական ձեռնարկներում:

Երկրորդ ենթագլխում՝ **«Միարարական-հակամիարարական պայքարը և փիլիսոփայական միտքը»**, անդրադարձ է կատարվել ժամանակի հրատապ դավանաբանական խնդրին՝ միարարական և հակամիարարական շարժմանը, քանի որ այն արտացոլվել է ոչ միայն քաղաքական-հասարակական կյանքում, այլ իր այլացումն է գտել եզակիի և ընդհանուրի փոխհարաբերությունների, այսինքն՝ ունիվերսալիաների խնդրի քննարկման ժամանակ մեկնիչների դրսևորած վերաբերմունքում:

Երրորդ ենթագլխում՝ **«Վարդան Արևելցու, Հովհաննես Երզնկացու, Եսայի Նչեցու, Հովհաննես Ծործորեցու և Հովհաննես Քռեցու կյանքի և գործունեության համառոտ ակնարկ»**, ներկայացված է քերականության մեկնիչների կյանքը և գիտամանկավարժական և հասարակական գործունեությունը:

Երկրորդ գլխի՝ **«Մեկնությունների փիլիսոփայական բովանդակությունը»**, առաջին ենթագլխում՝ **«Գիտությունների դասակարգում. քերականության դերը գիտությունների համակարգում»**, լուսաբանված է քերականական մեկնություններում առկա գիտությունների դասակարգումը, որն ընդհանուր առմամբ հիմնված է գիտությունների անհաղթյան դասակարգման վրա, ինչն իր

հերթին գալիս է գիտությունների անտիկ, ի մասնավորի արիստոտելյան դասակարգումից:

Նշված քերականներից Վարդան Արևելցին թեև գիտությունների դասակարգման փորձ չի կատարել, սակայն գիտաբանության առումով ուշագրավ դատողություններ ունի քերականության և գիտության մասին: Գիտությունների դասակարգման հարցը համեմատաբար հանգամանալից քննարկել է Հովհաննես Երզնկացին: Հենվելով անհաղթան սահմանումների վրա, նա գատորոշում է գիտությունը հմտությունից, որն, ըստ նրա, ոչ կատարյալ գիտություն է: Երզնկացին առանձնացնում է գիտության չորս տեսակ՝ 1. ընդհանուր, 2. մասնավոր («մասնական»), 3. պատճառների իմացությամբ («հանդերձ պատճառա»), 4. առանց պատճառների իմացության, որոնք հենվում են մարդկային իմացության չորս հիմնական ձևերի վրա՝ հմտություն, ներհմտություն, արվեստ և մակացություն. դրանցից վերջինը, ըստ նրա, «ընդհանուր, անսխալ և անփոխարինելի գիտութիւն» է: Եսայի Նչեցու կարծիքով, մարդու երկակի բնույթին՝ հոգուն և մարմնին համապատասխան, գոյություն ունի բանական արվեստ (գիտություն) և գործնական արվեստ: Իսկ Հովհաննես Ծործորեցին պնդում է, որ միայն քերականությունը ըստ ամենայնի ուրացնելուց հետո է միայն հնարավոր մոտենալ իմաստասիրության «դռներին»: Վերջապես, Հովհաննես Քնեցին իրականությունը, իրերն ու երևույթները բաժանելով երեք խմբի՝ բնություն, կամք, բանականություն, ըստ այդմ գիտությունները դասակարգում է բնականի, բարոյականի և բանականի:

Երկրորդ ենթագլխում՝ **«Աշխարհը և աշխարհաճանաչողությունը ըստ մեկնիչների»**, քննարկվում են նշված մտածողների գոյաբանական և իմացաբանական հայացքները:

Հետևելով Աստծո կեցության տիեզերաբանական ապացույցին, ընդունվում է, որ ամեն ինչի սկզբնապատճառը միակ բացարձակ և կատարյալ Աստվածն է, որի անկապտելի հատկանիշը հարատևությունն է, ի տարբերություն ժամանակի մեջ վերջավոր մնացյալ ամեն ինչի: Ողջ գոյավորը մարմնավոր է կամ անմարմին, նյութ է կամ ոգի, որոնցից առաջինը Նչեցին կոչում է «մարմին», իսկ երկրորդը տարբերակում է «զգալի իրի» և «իմանալի իրի»: Ինչպես

Արևելցին և Նչեցին, Երզնկացին նույնպես գտնում է, որ ոգին նախորդում է մարմնին և առավել պատվական է, քան մարմինը: Ծործորեցին նույնպես առանձնացնում է զգայելին՝ «մարմինը» և անշոշափելին՝ «իրը»: Ընդ որում, նա «մարմինը» կոչում է էություն, «իրը»՝ ներգործություն, որոնցից եթե «մարմինը» էություն է, ապա «իրին» հատուկ է այդ էությունների վրա ներգործելու ընդունակությունը, այսինքն՝ համաձայն նրա, ներգործությունը բարձր է էությունից:

Մեկնիչների իմացաբանական պատկերացումների համաձայն, իմացության ընթացքում կարևոր դեր ունեն զգայարանները: Արևելցին բացի ավանդական հինգ զգայարաններից՝ տեսողության, լսելիքի, հոտոտելիքի, համի, շոշափելիքի, ընդունում է նաև այսպես կոչված հոգու և մարմնի զգայարաններ: Նչեցին ընդգծում է իր սենսուալիստական դիրքորոշումը, գտնելով, որ ինչպես խոսքի մեջ նախապատիվ և առաջնային են ծայնավորները, այնպես էլ իմացության մեջ ավելի կարևոր են զգայությունները: Ըստ Երզնկացու, բանականության ոլորտը բաժանվում է երեք աստիճանական շերտերի. ա) աստվածային, որ պարզ է և ամենաշարժիչ, բ) հրեշտակային, որ իմանալի և ստացական, ձեռքբերովի է, գ) մարդկային, որտեղ ճանաչողությունը տեղի է ունենում բանական հոգու և նյութական մարմնի միջոցով: Ծործորեցին նույնպես զարգացնում է բանականության երեք ոլորտների մասին ըմբռնումը, ըստ որի աստվածային բանականության մակարդակում իմացությունը պարզ է, հրեշտակայինում թեև աստվածայինի նման պարզ է, բայց ձեռքբերովի է, ինչպես վերջինը՝ մարդկային ոլորտը: Փաստորեն, հրեշտակային բանականությունը, ըստ Ծործորեցու, ընդհանրություն ունի թե աստվածային և թե մարդկային բանականությունների հետ և յուրատեսակ կապող օղակ է նրանց միջև:

Երրորդ ենթագլխում՝ **«Իսկի» և «առասականի» առաջնայնության հիմնահարցը**, քննարկված է եզակիի և ընդհանուրի առաջնայնության խնդրի լուծումը մեկնիչների կողմից:

Մեկնիչները նախ հիշատակում են այդ առթիվ Պլատոնի և Արիստոտելի միջև ծագած հայտնի վեճը, նշելով, որ եթե Պլատոնն ընդհանուրն էր համարում ժամանակի մեջ նախորդող, ապա Արիստոտելն՝ ընդհակառակը, գտնում էր, որ

նախ եզակի իրերն են լինում, ապա այդ հիման վրա գոյանում է նրանց ընդհանուր գաղափարը:

Թեև Արևելցին և Երզնկացին հստակ պաշտպանում են Արիստոտելի տեսակետը, բայց ի տարբերություն Արևելցու, Երզնկացին չի բավարարվում այսքանով, այլ ընդլայնում է իր դատողությունները խնդրի շուրջ, ընդամին ներառելով նաև նախորդ մեկնիչների պարզաբանումները: Երզնկացին արտահայտվելով արիստոտելյան կոնցեպտուալիզմի ոգով, գտնում է, որ թեև ընդհանուր հասկացությունները հաջորդում են եզակի իրերին, բայց և դատարկ հնչյուն չեն, այլ ունեն գոյաբանական հիմք և ամրագրում են օբյեկտիվորեն գոյություն ունեցող հատկություններ: Նչեցու կարծիքով նույնպես եզակին առաջնային է: Սակայն գտնում է, որ առանձին դեպքերում կարող է ընդհանուրը գերադասվել եզակիից: Իսկ Ծործորեցու կարծիքով՝ ամեն անուն կամ ընդհանուր է և մի տեսակի մեջ միավորում է իրերի ամբողջ բազմություն, կամ եզակի է, այսինքն՝ ընդհանուրից զատ անհատ: Թեև հիշատակում է Արիստոտելի և Պլատոնի տարակարծությունը, սակայն ի տարբերություն նախորդների, գրում է, որ մեկնիչը (ոչ ինքը, այլ նա, ում մեկնության հիման վրա գրել է) հետևում է Արիստոտելի կարծիքին, ապա բացատրում է վեճի էությունը: Իսկ Քռնեցին ուսումնասիրվող հեղինակներից միակն է, որ հարկ չի համարել անդրադառնալ Պլատոն-Արիստոտել հայտնի վեճին: Ըստ այդմ, գտնում է, որ անունը նշանակում է մարմին կամ իր և լինում է ընդհանուր կամ եզակի. եզակին նշանակում է հատուկ գոյացություն, ընդհանուրն՝ ընդհանուր որակ և գոյացություն: Նա տարբերում է ընդհանուր անվան երկու տեսակ՝ «նախագաղափար» և «ածանցական», որոնք համընկնում են ընդհանուր հասկացությանը: Այսպես, «նախագաղափար» տեսակի «գոյացական» կոչված անունը, ըստ նրա, ինքնին գոյություն ունեցողը նշանակելու համար է: Այդպիսին է, օրինակ, «սպիտակություն» հասկացությունը, որն իբրև այդպիսին գոյություն չունի, այլ միայն անուն է:

Զորրորդ ենթագլխում՝ **«Ժամանակը և թիվը՝ իրականի և անիրականի հոլովույթում»**, ներկայացված են մեկնիչների պատկերացումները ժամանակի

մասին և թվերի խորհրդապաշտության վերաբերյալ մեկնություններում արծարծված տեսակետները:

Երկրորդ գլխի վերջին ենթագլխում՝ **«Մարդու խնդիրը»**, հետազոտված են մեկնիչների պատկերացումները մարդու բնույթի, հոգևորի և մարմնականի փոխհարաբերության, առաքինությունների և բարոյագիտական մի շարք այլ հարցերի շուրջ:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Գեղագիտական միտքը քերականության մեկնություններում»**, բաղկացած է չորս ենթագլուխներից, որոնցից առաջին ենթագլխում՝ **«Արվեստի տեսական հարցերի և գեղագիտության արտացոլումը մեկնություններում»**, հիմնավորվում է այն տեսակետը, որ մեկնություններում առկա թե՛ փիլիսոփայական, թե՛ գեղագիտական, թե՛ երաժշտագիտական հարցադրումներն ու պնդումները, թեև ունեն «քերականացման» միտում, բայց և այնպես արժեքավոր են փիլիսոփայության և գեղագիտության դիտանկյունից:

Երկրորդ ենթագլուխը՝ **«Գրականության և քերականության փոխկապակցվածությունը»**, նվիրված է գրականության և քերականության կապի խնդիրների, ինչպես նաև հասարակական կյանքում գրականության նշանակության ու դերի, տաղաչափության և համանման այլ հարցերի մասին մեկնիչների ունեցած պատկերացումների վերլուծությանը: Նրանցից Հովհաննես Երզնկացին, իբրև սկզբունք ընդունելով քերականության՝ գրականության համեմատությամբ առավել բարձր կարգի լինելը, փաստորեն գտնում է, որ գիտությունը (քերականությունը) առավել բարձր է արվեստի (գրականության) հետ համեմատած: Ինչպես ամեն արվեստ իր նյութն ունի, որից կառուցում է իր ստեղծագործությունը, այնպես էլ գրականության արվեստը հենվում է իր նյութական ատաղձի՝ գրի վրա: Արևելցու նման Երզնկացին ևս հետևելով Ստեփանոս Սյունեցուն, գտնում է, որ ինչպես իրականությունը կարող է լինել դառն կամ քաղցր, այնպես էլ արվեստը կարող է լինել բարի կամ չար: Խոսելով գրաժանրերի մասին՝ Ծործորեցին գրում է, որ ողբերգությունը մխիթարանքի ուժ ունի, իսկ կատակերգությունը՝ դաստիարակչական: Քննեցին դասակարգման հիմք ընդունելով «ըստ ենթադաստիարան» վերծանության եղանակները,

տարբերակում է գրական ստեղծագործությունների հետևյալ տեսակները՝ ողբերգություն, կատակերգություն, դամբանական, ներշնչական տաղ, քնարական քերթություն, խանդաղատական:

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Երաժշտական գեղագիտության հարցեր»**, քննարկված են երաժշտական գեղագիտության խնդիրների մասին հայ քերականների արտահայտած հիմնական տեսակետները: Հետևելով ավանդույթին, մեկնիչները երաժշտությունը համարում են իմաստասիրության մաս, որը համեմատելի է թվաբանության, երկրաչափության ու աստղաբաշխության հետ: Երաժշտությունը համարում են նյութականի և աննյութականի միասնություն: Այն ինքնին վերցրած աննյութական և անմարմին է, բայց ունի նաև նյութական կողմ. այդպիսին են երաժշտական գործիքները և կատարող-երգող մարդը: Հետաքրքիր է մեկնիչների ուսմունքը ծայնի մասին: Նրանք ծայնը համարում են ընդհանրապես աննյութական լսելի ու իմանալի և նախապատիվ, քան տեսանելին:

Ատենախոսության վերջին գլխի վերջին ենթագլխում, որ վերնագրված է **«Հովհաննես Երզնկացու երաժշտական գեղագիտությունը»**, լուսաբանվում են Երզնկացու քերականական մեկնության մեջ շոշափվող գեղագիտական հարցերը: Ըստ Երզնկացու, եթե բոլոր արվեստների առարկան և ձևը թանձր, նյութական մարմինն է, ապա երաժշտությունն, ի տարբերություն մյուս բոլոր արվեստների, բաղկացած է պարզ և մաքուր, զուտ էություններից, այսինքն՝ այն լսողական և իմացական ունակությունների արգասիք է: Համեմատելով երաժշտությունը քերթողական արվեստի հետ՝ այն համարում է նախապատիվ, որովհետև բանաստեղծության արվեստը սկզբունքներ է վերցնում հենց երաժշտարվեստից: Երաժշտությունը համեմատում է նաև քերականության հետ՝ դարձյալ գերադասելով երաժշտությունը:

Ինչպես և Անհաղթը, Երզնկացին մերժում է այն տեսակետը, համաձայն որի ծայնը բանականության նյութն է այնպես, ինչպես փայտը՝ հյուսնության, և երկաթը՝ դարբնության: Չայնը սահմանում է իբրև օդի տատանում, տեղաշարժ, որը ընկալելի է դադարի, լռության հերթագայության մեջ: Չայնը դասակարգում է հետևյալ տեսակների՝ շնչավոր ծագման և անշունչ ծագման, անշունչը՝

բնական և գործիքային, շնչավորը՝ բանական և անբանական, իսկ բանականը (մարդկայինը)՝ իմաստավոր («նշանական») և անիմաստ («աննշան»)

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ամփոփված են հետազոտության արդյունքները, որոնցից առավել կարևորներն են.

- Քերականության տեղի և դերի իմաստավորման նպատակով մեկնիչներն անդրադարձել են գիտությունների դասակարգման խնդրին և ըստ այդմ ստեղծել գիտությունների դասակարգման պակաս կամ առավել ամբողջական համակարգեր:

Մեզ հետաքրքրող դարերի հայ մեկնիչ-քերականներից գիտությունների դասակարգման հարցն ամենից հանգամանորեն քննարկել է Հովհաննես Երզնկացին. նա նախ նշում է «բանական արվեստին» ներկայացվող հինգ անհրաժեշտ պայմանները և ապա թվարկում գիտության չորս տեսակ՝ 1. ընդհանուր, 2. մասնավոր («մասնական»), 3. պատճառների իմացությամբ («հանդերձ պատճառաւ»), 4. առանց պատճառների իմացության, որոնց հիմքում համապատասխանաբար ընկած են հմտությունը, ներհմտությունը, արվեստը և մակացությունը:

Եսայի Նչեցին վկայակոչում է Ղավիթ Անհաղթի տեսակետը՝ հստակեցնելով իր ըմբռումները: Հովհաննես Ծործորեցին գիտությունը բաժանում է տեսականի և գործնականի՝ հիմք ընդունելով ինչը բացատրվում է մարդու բնության հոգեկան և մարմնական երեսները:

Հովհաննես Քնեցին բանական կոչվող գիտությունների շարքում առանձնացնում է իմաստասիրությունը, որը նրա կարծիքով բաղկացած է խոսքի տարբեր փոխարկումները ուսումնասիրող երեք գիտություններից՝ 1. գիտություն պատշաճ և անպատշաճ, կանոնավոր և անկանոն խոսքի մասին, 2. գիտություն ճշմարիտ և սուտ խոսքի մասին, 3. գիտություն զարդարուն և անզարդար խոսքի մասին: Իմաստասիրության մասերից՝ քերականություն, տրամաբանություն և ճարտասանություն, նախապատվությունը տալիս է քերականությանը, քանի որ դրանից է սկսվում տրամաբանությունը:

- Մեկնիչների փիլիսոփայությունը օբյեկտիվ իդեալիզմն է: Նրանց կարծիքով, Աստված, լինելով անզգայելի և անմարմին, չի կարող դառնալ բանական ճանաչողության առարկա, այլ միայն՝ հավատի: Ողջ գոյավորը մարմնավոր է կամ անմարմին, նյութ է կամ ոգի: Նչեցին դրանցից առաջինը կոչում է «մարմին», իսկ երկրորդը տարբերակում է «զգալի իրի» և «իմանալի իրի»:

Ինչպես Արևելցին և Նչեցին, Երզնկացին ևս գտնում է, որ ոգին նախորդում է մարմնին և առավել պատվական է: Ծործորեցին նույնպես առանձնացնում է զգայելին՝ «մարմինը» և անշոշափելին՝ «իրը»: Այլ կերպ նա «մարմինը» կոչում է էություն, «իրը»՝ ներգործություն, ընդ որում, եթե «մարմինը» էություն է, ապա «իրին» հատուկ է այդ էությունների վրա ներգործելու կարողությունը:

Մեկնիչների իմացաբանական պատկերացումների համաձայն, ճանաչողության մեջ առաջնային դեր ունեն զգայարանները: Մարդկային ճանաչողությունը, ըստ Երզնկացու, տեղի է ունենում բանական հոգու և նյութական մարմնի միջոցով՝ իրականանալով երկու ճանապարհով՝ բանական և զգայական: Բանական հոգին ճանաչում է անզգայելին, նյութական մարմինը՝ զգայելին: Ըստ Երզնկացու, իմացությունն սկսվում է «իմանալից», ոչ թե «տեսանելից»: Ինչպես և մյուս մեկնիչները, Ծործորեցին ևս բոլոր առարկաները բաժանում է երկու խմբի. այն, ինչ մեզ տրվում է զգայարանների միջոցով, «մարմին» է, իսկ անշոշափելին՝ «իր», բայց ի տարբերություն մյուս մեկնիչների, որոնք գտնում են, որ «իրը» միայն լսողությամբ է ըմբռնվում, Ծործորեցին ավելացնում է նաև «իրի»՝ մտքով իմացվելու հատկությունը:

Մեկնիչները համառոտակի կամ ծավալուն ձևով շարադրելով իրենց տարրաբանական հայացքները, դրանք ներկայացնում են երաժշտագիտական պատկերացումների համատեքստում, քանզի երաժշտական այս կամ այն երևույթը հիմնավորում-բացատրում են տարրերի մասին ունեցած պատկերացումների հիման վրա:

- Մեկնություններում հատուկ ուշադրություն է դարձվում եզակիի և ընդհանուրի խնդրին: Ինչպես Դավիթ Անհաղթի իմաստասիրական համակարգն ամբողջությամբ, այնպես էլ ընդհանուրի և եզակիի նրա ըմբռնումն արտացոլվել է հայ իմաստասիրական մտքի մեջ, և այդ իմաստով բացառություն չեն նաև մեկնիչները:

Հակամիարարներ Վարդան Արևելցին, Եսայի Նչեցին և Հովհաննես Երզնկացին հստակ դրսևորում են նոմինալիստական դիրքորոշում, երբ ընդունում են արիստոտելյան «իսկի» (եզակիի) առաջնայնությունը «առասականի» (ընդհանուրի) նկատմամբ: Միարարներ Հովհաննես Ծործորեցու և Հովհաննես Քննեցու մեկնություններում զգալի տեղ է հատկացված եզակիի և ընդհանուրի փոխհարաբերություններին. հակամիարարական մեկնիչների նման, նրանք նույնպես բուն հասկացությունները վերլուծելիս ելնում են նոմինալիստական տեսակետից:

Եվս մի նկատառում՝ հիմնված «առասութին» (ընդհանուր) բառի ստուգաբանության վրա: «Առասութին» (լատիներեն՝ appellatio) նշանակում է հորջորջում, անվանում, կոչում: Սա նշանակում է, որ Թրակացու քերականության թարգմանիչն ու առաջին մեկնիչը, հարազատ մնալով հունարեն բնագրին, ընդհանուր հասկացության հայերեն համարժեքում արտացոլել է նոմինալիստական այն պնդումը, որ ընդհանուր հասկացությունը նախ և առաջ բառ է, խոսք, այսինքն՝ անուն:

- Գրականության խնդիրներից մեկնիչներն առանձնահատուկ կանգ են առել գրական ժանրերի, գրականության դերի և ազդեցության, ինչպես նաև տաղաչափության հարցերի վրա:

Արևելցին գտնում է, որ ընդհանրապես արվեստը, արվեստի ստեղծագործությունները պետք է ուսումնասիրվեն ոչ այլ կերպ, քան արվեստով: Մեկնիչները դրսևորում են արվեստի երկու տարբեր ընմբռնում. առաջին դեպքում արվեստը քերականությունն է՝ իբրև գիտություն, երկրորդ դեպքում արվեստը հենց ինքնին վերցրած

արվեստն է կամ գեղարվեստը: Այս միտքը գեղագիտական հավատամք է, որն առաջադրում է արվեստը մասնագիտորեն վերլուծելու և գնահատելու պահանջը:

- Մեկնիչները շոշափել են նաև երաժշտական գեղագիտության խնդիրներ:

Համաձայն Արևելցու, կատարյալ տաղը բառի, մեղեդու, վանկերի քանակի և բովանդակության ներդաշնակ ձուլվածքն է: Նա շեշտում է նաև երգվող տաղի մեջ մարդկային ձայնի և երաժշտական գործիքների կատարմամբ՝ նվագակցությամբ հնչող երաժշտության ներդաշնակության անհրաժեշտությունը: Նչեցին երաժշտությունը համարում է իմաստասիրության մաս և համեմատելի թվաբանության, երկրաչափության ու աստղաբաշխության հետ: Հետևելով Դավիթ Անհաղթին, Ծործորեցին նույնպես ձայնի էությունը համարում է իմաստասիրության առարկա և զարգացնում է իր ուսմունքը ձայնի մասին, ըստ որի՝ ձայնը կարող է լինել երկու ծագման՝ անկենդան և կենդանական: Հետաքրքիր է, որ Ծործորեցին չի թերագնահատում գուսանական երաժշտությունը, ուստի կարևորում է նրա պատշաճ ուսումնասիրությունը:

- Հովհաննես Երզնկացին երաժշտությունն անվանում է մեծ արվեստ: Երաժշտությունն, ի տարբերություն մյուս բոլոր արվեստների, բաղկացած է պարզ և մաքուր, զուտ էություններից: Ինչպես և Անհաղթը, Երզնկացին մերժում է այն տեսակետը, թե ձայնը բանականության նյութն է այնպես, ինչպես փայտը՝ հյուսնության, և երկաթը՝ դարբնության:

Եթե Անհաղթը ձայնը սահմանում է որպես մարդու արտաշնչման պատճառով ձայնալարերի տատանումից արձակված հնչյուն, որը հողաբաշխվում է լեզվով և լեզվակով, փաստորեն սահմանելով ոչ թե ձայնը, այլ միայն մարդկային ձայնը, ապա Երզնկացին սահմանում է ձայնն ընդհանրապես՝ ձայնը որպես օդի տատանում և տեղաշարժ: Ձայնը, ըստ նրա, լինում է նախ շնչավոր և անշունչ ծագման, անշունչը՝

բնական և գործիքային, շնչավորը՝ բանական և անբանական, բանականը (մարդկայինը)՝ իմաստավոր («նշանական») և անիմաստ («աննշան»): Այս դասակարգումը երաժշտագիտության և փիլիսոփայության տեսանկյունից համարվում է ժամանակի ամենաամբողջական դասակարգումը:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում և մենագրության մեջ.

1. **Աշուրյան Կ. Ա.**, Նոմինալիզմը քերականության հայ մեկնություններում, Գիտական նստաշրջանի զեկուցումներ, պրակ 4, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2006, էջ 49-64:
2. **Աշուրյան Կ. Ա.**, 13-14 դարերի քերականության հայ մեկնիչները և մեկնությունների փիլիսոփայական-գեղագիտական արժեքը, Գիտական նստաշրջանի զեկուցումներ, պրակ 4, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2006, էջ 21-39:
3. **Աշուրյան Կ. Ա.**, Փիլիսոփայական-գեղագիտական միտքը 13-14 դարերի քերականության հայ մեկնություններում, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 1(30), «Ասողիկ» հրատ., Երևան, 2007 , էջ 214-226:
4. **Աշուրյան Կ. Ա.**, Երաժշտական գեղագիտության հարցերը Հովհաննես Երզնկացու քերականության մեկնության մեջ, Հայ էսթետիկական մտքի պատմությունից, գիրք 8, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2009, էջ 8-21:
5. **Աշուրյան Կ. Ա.**, Արվեստի խնդիրները 13-14դդ. հայ քերականական մեկնություններում, Հետազոտությունների ժողովածու, գիրք 8 , Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2014, էջ 14-37:
6. **Աշուրյան Կ. Ա.**, Փիլիսոփայական և գեղագիտական միտքը 13-14դդ. հայ քերականության մեկնություններում, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2015, 200 էջ:

Ашугян Карине Арамаисовна

**ФИЛОСОФСКАЯ И ЭСТЕТИЧЕСКАЯ МЫСЛЬ В АРМЯНСКИХ
ГРАММАТИЧЕСКИХ ТОЛКОВАНИЯХ 13-14 ВВ.**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата
филологических наук по специальности 09. 00.02- «История философии».

Защита состоится 23 марта 2016 года в 15.00 на заседании специализированного
совета Философии и социологии 013 ВАК в ЕГУ, по адресу: 0025, г. Ереван, ул.
Абовяна 52 а., ЕГУ.

РЕЗЮМЕ

В средневековой армянской культуре и науке особое место занимают толкования «Искусства грамматики» Дионисия Фракийского. На протяжении почти полутора тысяч лет этот труд оказывал мощное влияние на развитие европейской, в том числе и армянской научной мысли. Будучи первым переводом грекофилов, армянский перевод Грамматики заложил основу для многовековой традиции толкований. Подобно предыдущим и последующим армянским толкованиям Грамматики, толкования 13-14 вв. являются также частью армянской историко-философской и эстетической мысли, поскольку в толкованиях Вардана Аревелци (13в.), Ованнеса Ерзнкаци (13в.), Есайи Нчеци (13-14вв.), Ованнеса Цорцореци (14в.) и Ованнеса Крнеци (14в.) помимо лингвистических вопросов, рассматривается также философская и эстетическая проблематика. В данной диссертации сделана попытка выявлять философское и эстетическое содержание толкований, исходя из того факта, что в отличие от эмпиризма Дионисия Фракийского, армянские толкователи руководствовались принципом рационализма.

Основываясь на философской и эстетической мысли, а также обобщая богатый культурный опыт своего времени, армянские толкователи рассматривали вопросы бытия и познания, бога и природы, классификации наук.

Проблема единичного и общего занимает у них особое место: армянские толкователи в споре об универсалиях исходили из номиналистической позиции, в противовес рационализму Фракийского. Значительное место занимают вопросы эстетики, в частности, классификации искусств, взаимоотношения искусства и науки, грамматики и искусства, особенно литературы и музыки, вопросы их критериев, роли и функции.

Диссертация состоит из Введения, трех глав и заключения. В первой главе представлена историко-культурная панорама времени и создания толкований, кратко изложена история унитариянства, позиция толкователей в вопросе унитарства и антиунитарства, а так же научная и педагогическая деятельность толкователей. Во второй главе представлены онтологические и гносеологические представления, взгляды толкователей на классификацию наук, отношения к самой острой проблеме того времени - к проблеме отдельного и общего, номинализма и «реализма». Третья глава посвящена анализу эстетического содержания толкований: теоретическим и практическим вопросам искусства, в частности, классификации, предмета и взаимоотношения искусства и грамматики, литературы и музыки и т.д. Отдельно представлены музыкально-эстетические взгляды Ованнеса Ерзнкаци, которые и по объему, и по глубине являются самыми ценными среди толкований своего времени.

Karine Ashughyan Aramays

PHILOSOPHICAL AND AESTHETIC THOUGHT OF 13-14

CENTURIES ARMENIAN INTERPRETATIONS OF GRAMMAR

**Thesis for Receiving Academic Degree of Candidate of Philosophical Sciences Area of
specialization: 'History of Philosophy'.**

The dissertation defense will be held on 23 March, 2016, at 15.00 at Yerevan State
University at the committee of meeting of Philosophy and Sociology
with the speciality of HCC 013,
Address: 0025, 52a, Abovyan str., YSU, Yerevan

Resume

Interpretations of Dionysius Thrax in his work «Art of Grammar» to occupy a prominent place in medieval Armenian culture and science. For nearly a thousand and a half years, this work has had a powerful influence on the development of European, as well as Armenian scientific thought. Being the first translation of Philhellenes, Armenian translation of Art of Grammar laid the foundation for the centuries-old tradition of interpretation. Like the previous and subsequent Armenian interpretations of the work, 13-14 centuries interpretations are also considered to be the part of the Armenian historical-philosophical and aesthetic thought, because in addition to linguistic issues, philosophical and aesthetic perspective as also reviewed in the interpretations of Vardan Areveltsi (13c.), Hovhannes Erznkatsi (13c.), Esayi Nchetsi (13-14c.), Hovhannes Tsortsoretsi (14c.), and Hovhannes Krnetsi (14c.). This book attempts to identify the philosophical and aesthetic content of interpretations, based on the fact that in contrast to the empiricism of Dionysius Thrax, Armenian interpreters were guided by the principle of rationalism, and this explains the presence of philosophical and aesthetic reflections.

Based on the philosophical and aesthetic thought, as well as summarizing the rich cultural experience of their time, Armenian interpreters addressed such issues as the existence and knowledge of God and Nature, issues of classification of sciences.

The issue of the individual and general play an essential role: Armenian interpreters in the dispute about universals had nominalistic position, as opposed to Thracian "rationalism". Questions of aesthetics, in particular - the classification of the arts, the relations between art and science, questions of grammar and the arts, especially of literature and music, questions of their criteria, roles and functions are paid considerable attention.

Dissertation consists of an introduction, three chapters and a conclusion. The first chapter introduces historical and cultural background of the time, and creation of interpretations. In order to identify the links between philosophical thought and the spirit and mood of the time under consideration, brief history of Unitarianism, interpreters' position on the issues of Uniatism and Antiuniatism, as well as scientific and pedagogical activities of interpreters are also summarized. The second chapter Interpretations as part of Philosophical Thought introduces ontological and gnoseological ideas, the interpreters' views on the issue of classification of sciences, as well as the attitude to the most acute problem of the time - to the problem of individuals or particulars and universals, problem of nominalism and realism. The third chapter is devoted to the analysis of the aesthetic content of interpretations, such as theoretical and practical aspects of art, particularly classifications, subject matter and interrelation of art and grammar, literature and music, etc. Musical and aesthetic views Hovhannes Erznkatsi are presented separately: by the volume and depth they are considered to be among the most valuable interpretations of his time.